ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

7.02.2019
341-38

ՀՀ Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության
պետ Եզոր Կարապետյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Կարապետյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել քաղաքացի Տիգրան Մամիկոյանը և խնդրել աջակցել իրեն տեղեկություն ստանալու հարցում:

Տիգրան Մամիկոյանը դիմել է ՃՈ 24.05.2018 թ.-ին կայացված N 1807971808 որոշումը չեղարկելու խնդրանքով և, ի թիվս այլնի, խնդրել է նաեւ տրամադրել «մուտքի լուսացույցի տեսագրությունը խաչմերուկի անցման ժամանակ»: ՃՈ-ը պաշտոնապես քաղաքացուն պատասխանել է 06.06.2018 թ.-ին, սակայն, առանց որևէ հիմնավորման, պահանջված տեսագրությունը չի տրամադրվել:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել խնդրվող տեսագրությունը քաղաքացու իրավունքների պաշտպանությունը լիարժեք ապահովելուն համար:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Քաղաքացու գրությունը՝ կից:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Հասցե՝ Գյուլբենկյան 25 բն 6, 0033, Երևան
Հեռ.՝ +374 93 990411

ՀՀ ոստիկանության
«Ճանապարհային ոստիկանություն»
ծառայության պետ
Պրն. Ե Կարապետյանին
Քաղաքացի
Տիգրան Վահանի Մամիկոնյանից

ք.Երևան *24/05/2018թ.*

Դիմում
/N 1807971808 որոշումը չեղարկելու պահանջի վերաբերյալ/

Ստացել եմ 20.04.2018 թ. վարչական տույժ նշանակելումասին **N 1807971808** որոշումը
Ուզում եմ նշել, որ բացարձակապես համաձայն չեմ որոշման հետ: Ստորև ներկայացնում եմ համաձայն չլինելուս պատճառները

1. Խաչմերուկը անցել եմ լուսացույցի թույլատրող ազդանշանի ժամանակ:
2. Խաչմերուկը անցնելիս ղեկավարվել եմ ինձնից աջ գտնվող մուտքի լուսացույցով:
3. Տեսանյութերում բացակայում է խաչմերուկ չհասած, աջ կողմում տեղակայված մուտքի լուսացույցը, որին պարտավոր էի ենթարկվել: Հետևաբար բացակայում են նաև մուտքի լուսացույցի արգելող ազդանշանները, ինչի պայմաններում վարույթ իրականացնող և համադրող մարմինը պարտավոր էր ուշադրություն դարձնել այդ փաստին և տեսանյութի համադրումից գար հետևության, որ իրավախախտման փաստը հաստատված չէ:
4. **«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճԵԿ խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի** համաձայն՝ *խախտման հատկանիշների պարզումը տեսանյութում մամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ: Իսկ իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում մամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում իսկ կասկածի դեպքում մեկնաբանվում է հօգուտ անձի:*

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ տրամադրել բոլոր ապացույցները (մասնավորապես մուտքի լուսացույցի տեսագրությունը խաչմերուկի անցման ժամանակ) կամ չեղարկել (անվավեր ճանաչել) իրավախախտման մասին որոշումը:

Ի հավելումն՝ կուզեի նշել, որ կիսատ ապացույցների ներկայացման դեպքում, վտանգ է առաջանում, որ մարդիկ, չհիշելով դեպքի մանրամասները ուղղակի կմուծեն չկատարված խախտման (որը, ինչպես այս դեպքում, առաջին հայացքից ակնհայտ է թվում) համար տուգանքը:

Հարգանքով՝ Տիգրան Մամիկոնյան